ՀԱՍԿԱՆԱԼ MEDICARE-Ը ԵՎ MEDICAID-Ը

Medicare-ը դաշնային առողջական ապահովագրություն է բոլոր 65 տարիքը բոլորած մարդկանց և 65 տարիքը չբոլորած մի շարք որոշակի հաշմանդամություններ կամ վիճակներ ունեցողների համար: Medicaid-ը համատեղ դաշնային և նահանգային ծրագիր է, որը առողջական ծածկույթ է տալիս սահմանափակ եկամուտ և աղբյուրներ ունեցող մի շարք մարդկանց:

Մի շարք մարդիկ Medicare-ի համար որակավորվում են տարիքի և հաշմանդամության պատճառով և իրավասու են Medicaid-ի համար, քանի որ բավարարում են իրենց նահանգում Medicaid-ի համար որակավորվելու պայմանները: Այս մարդիկ **«կրկնակի իրավասու»** են, քանի որ իրավասու են ինչպես Medicaid-ի, այնպես էլ Medicare-ի համար:

Medicare-ը ներառում է՝

Ա Մաս – Ստացիոնար/Հիվանդանոցի ապահովագրություն Ստացիոնար հմուտ բուժքույրական հաստատություն, Մահացու հիվանդների օթևան և մի շարք տնային առողջապահական ծրագրեր

Բ Մաս – Ամբուլատոր խնամք, բժշկի ծառայություններ, Դիմացկուն բժշկական սարքեր, Լաբորատորիայի և ռենտգեն ծառայություններ, Տնային առողջապահության ծառայություններ և բազմաթիվ կանխարգելիչ ծառայություններ

Գ Մաս – Medicare Advantage տրամադրում է բոլոր Ա Մասի և Բ Մասի ծառայությունները. դեղատոմսային դեղերի ծածկույթ և այլ լրացուցիչ նպաստներ, որոնք հիվանդին տրամադրվում են հավելյալ ծախսով

Դ Մաս – Դեղատոմսային դեղերի ծրագրեր, վավերացված ապահովագրական ընկերություններ տրամադրում են ամբուլատոր դեղատոմսային դեղերի ծածկույթ, որը հիվանդին տրամադրվում է հավելյալ ծախսով

Medicare-ը ծածկում է՝

- 65 տարիքը բոլորած մարդկանց
- Նախկին որդեգիրների
- 19 տարիքը չբոլորած մանուկների և երեխաների
- Ցած եկամուտով ծնողների կամ խնամատար ազգականների
- Հղի մարդկանց
- Հաշմանդամ կամ կույր մարդկանց
- Նորածինների

Չնայած ինչպես Medicare-ը, այնպես էլ Medicaid-ը կառավարության կողմից տնօրինվող ծրագրեր են, յուրաքանչյուր նահանգ ունի տարբերություններ ծածկված ծառայություններում և ծախսաբաժիններում:

Medicare-ի և Medicaid-ի ծախսերի և ծածկույթի մասին ավելին իմանալու համար կարող եք զանգահարել 1-800-MEDICARE:

Medicaid-ը ներառում է՝

- Համապարփակ առողջական խնամքի ծրագիրը (Comprehensive Health Care Program, CHCP)
- Կառավարվող մասնագիտացված աջակցություններ և ծառայությունները (Managed Specialty Supports and Services)
- Տարեցների համապարփակ խնամքի ծրագիրը (Program for All-Inclusive Care of Elderly, PACE)
- Healthy Kids Dental երեխաների ատամնաբուժական ծրագիրը

Medicaid-ը ծածկում է՝

- Ցած եկամուտով ընտանիքների 19 տարիքը չբոլորած երեխաների
- Ցած եկամուտով հղի մարդկանց
- Ցած եկամուտով որոշակի ծնողների կամ խնամատարների
- Լրացուցիչ ապահովական եկամուտ (Supplemental Security Income, SSI) ծրագրի միջոցով կանխիկ օգնություն ստացող տարեցների և հաշմանդամների մեծ մասին

MI Health Link-ը Միչիգանին հատուկ ծրագիր է, որը թույլ է տալիս Medicare-ի և Medicaid-ի կողմից ծածկված առողջական խնամք և ծառայություններ:

Որակավորվելու համար, դուք պետք է՝

- Բնակվեք Barry, Berrien, Branch, Calhoun, Cass, Kalamazoo, Macomb, St. Joseph, Van Buren, Wayne վարչաշրջաններում, կամ Վերին թերակղզու (Upper Peninsula) որևէ վարչաշրջանում
- Բոլորած լինեք 21 տարիքը
- Ունենաք լիակատար Medicare և լիակատար Medicaid
- Գրանցված չլինեք մահացու հիվանդների օթևանում

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

ՀԱՐՑԵ՞Ր
https://moqc.org/
moqc@moqc.org